

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԲՈՒԽԱՐԱՆԱԿԱՆ ԱՅգԻ
БОТАНИЧЕСКИЙ САД АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Պյուլետեն

№ 13, 1953

Բյուլետեն

Ե. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԾԱՌԱ-ԹՓԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ
ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բուխարանական այգում երկար տարիներ կատարված ինտրոպուկցիոն աշխատանքների հետեւանքով ներկայումս հայտնաբերված են մի շարք բարձր գեկորատիվ արժեք ունեցող ծառային և թփային տեսակներ:

Այդ տեսակները մինչեւ օրս կանաչապատման աշխատանքներում չեն ներդրվել անկանյութի սակավության պատճառով, որը հետեւանք է այդ տեսակների բազմացման մեթոդների ոչ-լրիվ պարզաբանման: Նկատի ունենալով այդ, մենք անհրաժեշտ ենք համարել այդ տեսակները բազմացնել ամռան և ձմռան կարոններով, ինչպես նաև տերեային կոթուններով (որոշ տեսակներ):

Ահա այն տեսակները, որոնք կարող են օգտագործվել երևան քաղաքի կանաչապատման համար. *Platanus acerifolia* (սոսի թխկիատերեն, *Campsis radicans*, *Spiraea arguta* (*Ասպիրակ արգուտի*), *Rhus typhina* v. *dissecta* (*Թացախածառ*), *Vitex negundo* (*Վիտեքս նեգունդ*), *Spiraea pyramidalis* (*Ասպիրակ բրդածե*), *Honicera caprifolium* (*Կապրիֆոլ*), *Spiraea japonica* (*Յախակեռոսա յապոնական*), *Sambucus nigra* v. *laciniata* (*Կտըլուկնի սե*, *Sambucus sieboldii* (*Կտըլուկնի զիրորդ*), *Viburnum opulus* v. *roseum* (*Զյունաշարուկ*), *Hypericum Hookerianum* (*Արևկուրիկ*) և այլն:

Ահրամեջտ է նշել, որ վերև հիշատակված տեսակների բազմացման ձևերի մասին մեզ ծանոթ գրականությունը շատ աղքատ է: Մեր կողմից փորձարկված որոշ տեսակների ամռան կարոններով բազմացման փորձեր կատարվել են Ն. Կ. Վեխովի (1) կողմից, բայց ստացված արդյունքները մեր փորձերի համեմատ, նվազ հաջող են, որը ցույց կտանք ստորեւ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Վեհետատիվ բազմացման փորձերը դրվել են ջերմոցային պայմաններում, կարոնները անմիջապես տնկելով արկղներում, մաքուր ավազում:

Եայած մինչհանգույցների երկարությանը, կարոնները վերցված են տարբեր երկարությամբ՝ 2—3 սմ մինչև 8—10 սմ երկարությամբ և այլն: Կարոնները մայր թփերից կտրվել են առավոտյան ժամերին և տեղափոխվել ջերմոց ջրով լի դույլով: Զանազան թփատեսակների արժատակալման ժամանակ ջերմոցի օդի ջերմությունը եղել է տարբեր՝ $18,8^{\circ}$ -ից մինչև $27,7^{\circ}$:

Արժատակալած կարոնները այնուհետև տնկվել են առանձին հողամասում, տնկարանում նրանց աճեցողությունը շարունակելու և թփեր ստանալու համար:

ՍՏԱՑԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Թխկիտերես սոսի (Platanus acerifolia Ait willd): Այս ծառատեսակը ներկայում մեր սեսպուբլիկայում քիչ է տարածված և նրա մասայական բազմացման հարցով չեն զբաղվել, մինչդեռ շնորհիվ իր բարձր դեկորատիվ հատկություններին և համեմատաբար ցրտադիմացկունության, այս ծառատեսակը շատ հեռանկարային է, մանավանդ Բուսաբանական այգու պայմաններում, որտեղ սոսու մյուս տեսակը՝ Platanus digitifolia-ն ուժեղ ցրտահարկում է.

Սոսին բազմացնում են սերմով և ձմռան կտրոններով: Նրա ամռան կտրոններով բազմացման փորձեր մինչև օրս չեն եղել. Մենք նպատակ դնելով այն բազմացնել ամռան կտրոններով այդ ուղղությամբ կատարել ենք փորձեր և ամռան կտրոններով բազմացման արդյունքները համեմատելու նպատակով, Plat. acerifolia-ն բազմացը ենք նաև սերմով և ձմռան կը տրոններով:

Սերմերը ծլեցը ենք ջերմոցում: Ջերմության անհամաչափ լինելու հետևանքով (15-ից 23,9°), սերմերը ծլել են 36 օրվա ընթացքում, մինչդեռ ջերմության նորմալ պայմաններում նրանք ավելի շուտ են ծլում:

Ձմռան կտրոնները, որոնք պատրաստվել են երկամյա շիվերից 18—20 ամ երկարությամբ, տնկվել են անմիջապես հողում ապրիլի 18-ին, և 48 օր հետո արմատակալել են 40°/0-ով:

Սերմով և ձմռան կտրոններով բազմացրած բույսերի աճը պարզելու համար, վեգետացիայի ընթացքում չափել ենք նրանց միամյա և երկամյա բույսերը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջին տարին սերմով բազմացրած միամյա ճյուղերի աճն ավելի մեծ է, քան նույն տարին քի ձմռան կտրոններով բազմացրածներինը: Դա կարելի է բացատրել նրանով, որ նախ, սերմի ցանքը կատարվել է 13 օրով ավելի շուտ, քան կտրոններն են տնկվել: Երկրորդ, այն ժամանակ, երբ կտրոնները սկսում են արմատակալել, սերմով աճեցրածները արդեն ծիկեր ունեն:

Սակայն, երկրորդ տարին, կտրոնով բազմացրած երկամյա ճյուղերի աճը ավելի բարձր է, քան սերմով աճեցրածներինը:

Այսուհետեւ, նկատված է, որ կտրոններով բազմացրած բույսերի տերեւներն ավելի խոշոր են, իսկ կտրոնները, փոքր:

Կարենոր ենք համարում նշել, որ սերմով աճեցրած սոսիների տնկիները երկրորդ տարին պսակ են կազմում, մինչդեռ այդ երեսույթը չի նկատվում կտրոններով բազմացման դեպքում:

Այսուհետեւ, սերմից աճեցրած Platanus acerifolia-ն 12—15°/0-ով ճեղքում է տալիս, որի դեպքում բույսերը նմանվում են Platanus digitifolia-ին:

Platanus acerifolia-ի ամռան կտրոնները մենք պատրաստել ենք օգոստոսի 2-ին, 4—5 ամ երկարությամբ, չորս բազմոջով: Տնկումները կատարվել են ջերմոցներում նույն օրը, մաքուր ավազում: Արմատակալման շրջանում օդի միջին ջերմությունը եղել է 23,7°: Կարոնները սկսել են արմատակալել օգոստոսի 27-ին, այսինքն տնկումից 25 օր հետո, մասսայական արմատակալումը՝ սեպտեմբերի 3-ից: Համեմատած ձմռան կտրոննե-

րի արմատակալման հետ ($40^{\circ}/_0$), ամռան կտրոնները արմատակալել են $51^{\circ}/_0$ -ով, որն իհարկե դրական երկույթ է.

2. *Campsis radicans* (L.) seem.-ը գեղեցիկ գեղորատիվ թփատեսակ է, կենտ փետրաձև տերեններով, երկար շիվերով, գեղեցիկ, խոշոր, վարդագույն ծաղիկներով և որպես փաթաթվող բույս գործածվում է պարկերում, Ըստ Դրոսգեյմի (2) այս տեսակը բազմանում է սերմով և անդալիսով:

Նկատի ունենալով այս տեսակի բարձր գեղորատիվ արժեքը և մեզ մոտ քիչ տարածված լինելը, անհրաժեշտ ենք գտնում տալ մեր պայմաններում աճեցրած *Campsis radicans*-ի համառոտ նկարագրությունը:

Մեզ մոտ աճեցրած այս թփատեսակի սերմերը ստացվել են Բաքվից 1948 թվականին և ցանվել նույն տարվա մարտի 11-ին: Ծիլերը երևացել են ցանքից 49 օր հետո, ապրիլի 29-ին, սածիլվեր՝ մայիսի 5-ին և բուսակները հողում տնկվել՝ հունիսի 3-ին: Վեգետացիայի վերջում միամյա շիվերի երկարությունը եղել է 2,5—3 մետր:

Ֆենոլոգիական գիտողությունները ցույց են տալիս, որ մեր պայմաններում բողրոջները սկսում են ուռչել ապրիլի 25-ից, մասսայական ուռչելը՝ մայիսի 5-ից, տերենների բացման սկիզբը՝ մայիսի 13-ից, մասսայական բացումը՝ մայիսի 21-ից, ծաղկացին բողրոջների ուռչելը՝ հունիսի 27-ից, իսկ առանձին ծաղիկների ծաղկումը՝ օգոստոսի սկզբներին, 1950 թ. երեք տարեկան բուսակները առաջին անգամ տվել են մի քանի ծաղիկներ: *Campsis radicans*-ի միամյա շիվերը ցրտահարվում են արդեն -10° ցրտերից: Մեզ մոտ եղած բուսակների շիվերը ցրտահարվել են ամբողջ շիվի երկարության $25-30^{\circ}/_0$ -ով, որը կազմում է մոտ մեկ մետր երկարություն: Չնայած դրան, յուրաքանչյուր տարի վեգետացիայի վերջում նրանք տալիս են 3 մետրից ավելի երկարությամբ շիվեր:

Campsis radicans-ը մենք փորձել ենք բազմացնել ձմռան և ամռան կտրոններով և տերեկի կոթունով.

Ձմռան կտրոնները պատրաստվել են տերեսթափից անմիջապես հետո, նոյեմբերի 1-ին, 8—10 սմ երկարությամբ, յուրաքանչյուրը 3—4 բողրոջով: Մինչև տնկելը կտրոնները պահպահվել են սառը նկուղում և տնկվել հողում գարնանը՝ ապրիլի 20-ին: Կտրոնները արմատակալել էին բավական ցածր, ընդամենը $30^{\circ}/_0$ -ով: Դրա պատճառը անշուշտ եղել է ցածր ջերմաստիճանը (ապրիլին օդի միջին ջերմությունը եղել է $11,6^{\circ}$, մայիսին՝ $18,2^{\circ}$):

Ձմռան կտրոններով բազմացման փորձեր դրվել են նաև տաք պայմաններում ջերմոցում: Այս դեպքում աշնանը պատրաստված կտրոնները անմիջապես տեղափոխվել են ջերմոց և տնկվել արկղներում մաքուր ավազի մեջ երկու ձևով, սովորական ուղղահայաց և հորիզոնական դրությամբ: Կտրոնները տնկելու օրվանից մինչև նրանց արմատակալելը ջերմոցի օդի միջին ջերմությունը եղել է $16,8^{\circ}$: Թե հորիզոնական և թե ուղղահայաց տնկված կտրոնների արմատակալման աստիճանը պարզելու նպատակով, ստուգումը կատարվել է երեք ժամկետներում: Արդյունքները ցույց են տրված աղյուսակ 1-ում:

Ինչպես երեսում է աղյուսակից, *Campsis radicans*-ի ձմռան կտրոնների արմատակալման աստիճանը կախված է օդի միջին ջերմաստիճանից: Ամենաբարձր տոկոսով արմատակալումը տեղի է ունեցել երրորդ ժամկետում,

երբ օդի միջին ջերմաստիճանը եղել է $19,3^{\circ}$: Աղյուսակից նույնպես երես կում է, որ հորիզոնական դրությամբ տնկված կտրոնները ավելի բարձր տոկոսով են արմատակալել:

Աղյուսակ 1

ԱՆՑ Ը/Կ	Ստուգման կետները	Ժերմաստի- ճանը	Արմատակալման հորիզոն.	Աղյուսակ 1 ուղղահայաց
1	ձմռան կտրոններ	13,5	20,0	9,0
2	3,4-12/4	17,8	27,0	21,0
3	12/4-22/4	19,3	41,0	43,0
			88,9	73,0
1	ամռան կտրոններ	24,7	-	31,0
2	25/6	25,0	-	44,0
				75,0

Ամառային կտրոնները պատրաստվել են մայիսի 24-ին $5,6$ սմ երկարությամբ, $3-4$ բողբոջով: Տնկումները կատարվել են նույնպես մայիսի 24-ին, մաքուր ավազով, երկու բողբոջի խորությամբ: Տնկելուց առաջ կտրոնի տերևները կտրվել են մեկ երբարդով: Ամռան կտրոնների արմատակալման արդյունքները ցույց են տրված աղյուսակ 1-ում:

Աղյուսակից երեսում է, որ 48 օրվա ընթացքում ամռան կտրոնները արմատակալել են $750/_{\text{o}}$ -ով: Գրանից հետո, մնացած կտրոնները չեն արմատակալել:

Ինչպես տեսնում ենք *Campsis radicans*-ը հաջող բազմանում է թե ձմռան և թե ամռան կտրոններով, սակայն ձմռան կտրոններով բազմացման տևողությունը շատ ավելի երկար է՝ $5-6$ ամիս, մինչդեռ ամռան կտրոնների արմատակալումը տևում է 48 օր:

Հետաքրքիր արդյունք է ստացվել *Camp. radicans*-ի տերևներով բազմացումից: Նախ քան տերևներ տնկելը պոկել ենք տերևաթիթեղներով մի քանիսը և թողել կոթոնի վրա միայն հինգ հատ: Տերևները տնկվել են մաքուր ավազով մայիսի 24-ին: Հունիսի 13-ին, այսինքն տնկելուց 19 օր հետո, տերևները արմատակալել էին $42,8/_{\text{o}}$ -ով, երկրորդ ժամկետում, այս է հուլիսի 12-ին ևս արմատակալել էին $28,0/_{\text{o}}$ -ով, ընդամենը $70,80/_{\text{o}}$ -ով: Ինչպես տեսնում ենք *Campsis radicans*-ը հաջող արմատակալում է նաև տերևների կոթունով:

3. *Sambucus nigra v. laciniata*, *Sambucus sieboldii* L. Այս երկութիվատեսակները, որոնք արժեքավոր են իրենց ցրտադիմացկունությամբ և դեկորատիվ հատկություններով, սովորաբար բազմացնում են ձմռան կտրոններով: Մենք փորձել ենք դրանք բազմացնել ամռային կտրոններով և տերևային կոթուններով:

Ամառային կտրոնները պատրաստվել ենք $6-7$ սմ երկարությամբ մայիսի 24-ին և տնկել նույն օրը արկղներում, մաքուր ավազում չեն պահել ջերմոցում:

Տնկումից 34 օր հետո, հունիսի 28-ին *Sambucus nigra v. laciniata*-ի

կտրոնները արմատակալել էին $70^{\circ}/_0$ -ով, իսկ *Sambucus sieboldiana*-ինը՝ $54^{\circ}/_0$ -ով, Երկրորդ ստուգման ժամանակ (*հուլիսի 12-ին*), առաջին տեսակի կտրոնները արմատակալել էին ևս $15^{\circ}/_0$ -ով, իսկ երկրորդ տեսակինը՝ $21^{\circ}/_0$ -ով: Այսպիսով արմատակալման ամբողջ 48 օրվա տևողության օդի $24,5^{\circ}$ միջին ջերմության պայմաններում *Sambucus nigra* v. *laciniata*-ի կտրոնները արմատակալել են $85^{\circ}/_0$ -ով, իսկ *Sambucus sieboldiana*-ինը՝ $75^{\circ}/_0$ -ով:

Sambucus nigra v. *laciniata* & *Sambucus sieboldiana*-ի տերևների կոթունով բազմացումը բավելի դրական արդյունքներ է տվել: Այդ երկու տեսակների տերևները արմատակալել են $91^{\circ}/_0$ -ով.

4. *Spiraea pyramidata* Green. Այս թփատեսակը ինչպես հայտնի է բազմացնում են ձմռան կտրոններով: Մեզ հաջողվել է այն բազմացնել նաև ամռան կտրոններով: Վերջինները պատրաստվել են $4-5$ ամ երկարությամբ, տնկվել՝ մայիսի $18-ին$, նույնպես արկղներում, մաքուր ավազում և պահպել ջերմոցում: Մինչև հունիսի $20-ը$, այսինքն 42 օրվա ընթացքում ամռան կտրոնները արմատակալել են $68^{\circ}/_0$ -ով: Արմատակալման այդ շրջանում օդի միջին ջերմաստիճանը եղել է $24,8^{\circ}$:

5. *Symporicarpus albus*. Սրա սերմերը ունեն ցածր ծլունակություն և ծլում են $5-6$ ամսվա ընթացքում, այդ իսկ պատճառով այն մասսայականորեն բազմացնում են միայն ձմռան կտրոններով: Մեր գործնական աշխատանքների ժամանակ *Symporicarpus albus*-ները ձմռան կտրոններով արմատակալել են $75^{\circ}/_0$ -ով: Մենք փորձել ենք այդ բույսը արմատակալեցնել նաև ամռան կտրոններով:

Symporicarpus albus-ի ամռան կտրոնները պատրաստել ենք մայիսի $18-ին$, $5-6$ ամ երկարությամբ և իսկույն տնկել արկղներում, մաքուր ավազի մեջ: Հուլիսի $20-ին$, այսինքն փորձը դնելուց երկու ամիս հետո, ամռան կտրոնները արմատակալել էին $58^{\circ}/_0$ -ով: Հուլիսի վերջին, տաս օր հետո, ևս արմատակալել էին $18^{\circ}/_0$ -ով, այն է՝ ընդամենը $76^{\circ}/_0$ -ով: Արմատակալման պրոցեսը սկսվել է տնկման մոմենտից հաշված 32 օր հետո, իսկ ամրող արմատակալումը տևել է 72 օր: Այդ ամբողջ ժամանակամիջոցում ջերմոցում օդի միջին ջերմությունը եղել է $25,9^{\circ}$:

6. *Spiraea arguta* Zab. Շատ գեկսրտափի թփատեսակ է, ասպիրակների տեսակների մեջ ամենավաղ ծաղկողը: Շաղկում է մայիսին առատորեն: Շաղկինները մանր են և սպիտակ:

Դրականության տվյալներով *Spiraea arguta*-ն ձմեռային կտրոններով չի բազմանում, իսկ ամռան կտրոններով բազմացման փորձեր չկան:

Ձմռան կտրոններով մեր բազմացման փորձերը դրական արդյունքներ չեն տվել, արմատակալել էին միայն $2^{\circ}/_0$ -ով:

Ամռան կտրոններով բազմացման փորձերը դբել ենք երեք ժամկետում՝ մայիսի $18-ին$, հունիսի $12-ին$ և հուլիսի $2-ին$: Կարոնները պատրաստվել են $2-3$ ամ երկարությամբ, տնկվել են արկղներում, մաքուր ավազում:

Առաջին ժամկետում տնկված կտրոնները 46 օրվա ընթացքում արմատակալել էին $23,9^{\circ}/_0$ -ով, երկրորդ ժամկետում տնկվածները 37 օրվա ընթացքում արմատակալել էին $36,1^{\circ}/_0$ -ով, երրորդ ժամկետում տնկվածները՝ 58 օրվա ընթացքում $17,6^{\circ}/_0$ -ով: Ինչպես տեսանում ենք, բոլոր ժամ-



Рис. 1. Укорененные летние черенки; слева на право-
Symphoricarpos albus, *Lonicera caprifolium*,
Periploca graeca.

կետներում *Spiraea arguta*-ն ամռան կտրոններով բազմանում է, և թեպետ ընդհանրապես արմատակալման տոկոսը բոլոր ժամկետներում բավական ցածր է, բայց ամենից լավ արմատակալել են երկրորդ ժամկետում տնկվածները:

Օդի միջին ջերմաստիճանը առաջին ժամկետում եղել է $24,2^{\circ}$, երկրորդում՝ $22,7^{\circ}$, իսկ երրորդում՝ $25,1^{\circ}$:

7. *Viburnum opulus v. roseum* L. Գեղեցիկ դեկորատիվ թփատեսակ է. ըստ եղած տվյալների բազմանում է անդավիսի միջոցով, բայց մենք բազմացման փորձնը դրել ենք ձմռան և ամռան կտրոններով, ինչպես նաև տերևի կոթունով:

Ձմռան կտրոնները պատրաստել ենք աշնանից և մինչև գարուն պահել խոնավ ավազում: Տնկութերը կատարվել են անմիջապես հողում ապրիլի 14-ին, վեգետացիայի վերջում կտրոնները արմատակալել էին $48^{\circ}/_0$ -ով:

Ամռան կտրոնները պատրաստել ենք օգոստոսի 2-ին, 3,5—4 սմ երկարությամբ և նույն օրը տնկել արկղներում, մաքուր ավազում: Սեպտեմբերի 4-ին, այսինքն արմատակալման փորձնը դնելուց 32 օրվա ընթացքում կտրոնները արմատակալել էին $73,3^{\circ}/_0$ -ով: Այստեղից երևում էր որ *Viburnum opulus v.-roseum*-ի ամռան կտրոնները պահելի բարձր տոկոսը՝ են արմատակալում, քան ձմռան կտրոնները:

Փորձերը ցույց են տալիս, որ Viburnum opulus v. roseum-ի 1—1,5-տարեկան թփից վերցված կտրոնները ավելի բարձր տոկոսով. են արմատակալում (85%), քան 7—8 տարեկան թփից վերցվածները, որի դեպքում արմատակալել են $73,3\%$ -ով:

Այս դեպքում երկու թփերից էլ կտրոնները պատրաստվել են հունիսի 4-ին, 3—4 ամ երկարությամբ և տնկվել հենց նույն օրը: Կտրոնների արմատակալման տևողությունը եղել է 42 օր, որի ընթացքում օդի միջին ջերմությունը եղել է $23,0^{\circ}$:

Դրական արդյունք են տվել նաև Viburnum opulus v. roseum-ի տերմիների կոթունով բազմացման փորձերը: Տերմիների տնկումները կատարվել են հունիսի 4-ին, Տնկումներից հաշված 58 օրվա ընթացքում տերմիները արմատակալել են 41% -ով:

Ինչպես տեսնում ենք Viburnum opulus v. roseum-ը բազմանում է ոչ միայն անդալիսի միջոցով, ինչպես հիշատակված է դրականության մեջ, այլև ձմռան ու ամռան կտրոններով, և մինչև իսկ տերեւի կոթունով:

8. *Rhus typhina* v. dissecta Rehd. Այս թփատեսակը մեր պայմաններում ամեն տարի ցրտահարվելով հետևյալ տարին տալիս է միայն մեկ կամ երկու ճյուղ. այդ իսկ պատճառով հնարավորություն չունենալով ձմռան և ամռան կտրոններով բազմացման փորձեր դնելու, արմատակալման փորձեր դրել ենք միայն տերեւի կոթուններով: Արմատակալման փորձեր գրել ենք երկու ժամկետում. առաջինը՝ մայիսի 24-ին, երկրորդը՝ հունիսի 28-ին: Առաջին ժամկետի տերմինը բոլորովին չարմատակալեցին, բայց երկրորդ ժամկետում արմատակալեցին 81% -ով: Արմատակալումը տեղի ունեցավ տերմիները տնկելուց հաշված 22 օրվա ընթացքում, որի ժամանակամիջոցում օդի միջին ջերմությունը եղել է $25,1^{\circ}$,

9. *Vitis negundo* L. Դրականությունից հայտնի է, որ այս տեսակը բազմանում է սերմերով, որոնք ծլում են 5—6 ամսից հետո:

Մենք այս թփատեսակը բազմացնելու համար օգտագործել ենք ամռան կտրոնները: Կտրոնները վերցված են մասսայական ծաղկման շրջանում, 6—7 ամ երկարությամբ և տնկվել են հուլիսի 12-ին: Արմատակալումը սկսվել է հուլիսի վերջերին և մասսայականորեն արմատակալել են մինչև օգոստոսի 9-ը, $69,0\%$ -ով: Արմատակալման ամրողջ տևողությունը եղել է 57 օր, որի ընթացքում օդի միջին ջերմությունը կազմել է $24,6^{\circ}$.

Հետաքրքիր է նշել, որ կտրոնների արմատակալման ընթացքում նրանց վրա եղած ծաղիկները չեն թափվել և շարունակել են իրենց ծաղկումը:

10. *Lonicera japonica* Thunb. Բազմացը ենք ամռան և կիսահատ կտրոններով: Ամառային կտրոնները պատրաստել ենք 4 ամ երկարությամբ, յուրաքանչյուրի վրա թողնելով 5 տերեւ առանց տերևաթիթեղը պակասեցնելու: Տնկումները կատարվել են սեպտեմբերի 13-ին. մինչև նոյեմբերի 16-ը, այսինքն 64 օրվա ընթացքում կտրոնները արմատակալել էին 64% -ով: Այդ ժամանակամիջոցում օդի միջին ջերմաստիճանը եղել է 14° ,

Կիսահատ կտրոնները նույնպես պատրաստել ենք սեպտեմբերի 13-ին, 8—10 ամ երկարությամբ, և տնկել նույն օրը ոչ թե առանձին-առանձին և հատ-հատ, այլ ամրողջ խրձով: Նոյեմբերի 16-ին առաջին ստուգման ժամանակ կտրոնները արմատակալել էին 54% -ով, իսկ երկրորդ ստուգման

ժամանակ, դեկտեմբերի 19-ին արմատակալել էին ևս $18^{\circ}/_0$ -ով, ընդամենը՝ $72^{\circ}/_0$ -ով: Կտրոնների արմատակալման տեղությունը եղել է 76 օր, որի ընթացքում օդի միջին ջերմությունը կազմել է $12,8^{\circ}$: Զնայած երկրորդ ժամկետում, այսինքն խճռով տնկելու ժամանակ օդի միջին ջերմությունը ավելի ցածր է եղել, արմատակալման տոկոսը այս դեպքում ավելի բարձր է:

11. *Lonicera caprifolium* L. Սա ընդհանրապես բազմանում է սերմերով և ձմեռային կտրոններով: Տերմերը աշնանը ցանելու դեպքում ծլում են առաջին գալրանը, այսինքն ցանքից մինչև ծիկլերի երկալը տեսում է $7-8$ ամիս: Մենք փորձել ենք *Lonicera caprifolium*-ը բազմացնել ամառային կտրոններով, կտրոնները պատրաստել ենք մայիսի 5-ին, 4-5 ամ երկարությամբ և տնկել արկղում, մաքուր ավազում: Տնկման օրվանից հաշված 34 օրվա ընթացքում կտրոնները արմատակալել էին $59^{\circ}/_0$ -ով: այդ ժամանակամիջոցում օդի միջին ջերմությունը եղել է $24,1^{\circ}$: Երկրորդ սուզման ժամանակ, այսինքն 11 օր հետո, կտրոնները տրմատակալել էին ևս $17^{\circ}/_0$ -ով, ընդամենը $76^{\circ}/_0$ -ով: Երկրորդ շրջանում օդի միջին ջերմությունը եղել է $26,4^{\circ}$: Արմատակալումը տևել է 45 օր, որի ընթացքում օդի միջին ջերմությունը կազմել է $24,0^{\circ}$:

12. *Hypericum Hookerianum* Wight et Arn. Այս թփատեսակը բազմացնում են սերմերով: Ցանքը կատարում են մարտի երկրորդ կեսին ջերմոցում (ասպիրակի սերմի նման), այսուհետեւ սերմից ծլած բուսակները սածիլում են արկղներում, ապա մոտ 25 օրից հետո տեղափոխում ժաղկամանների մեջ և միայն աշնանը տնկում հողում: Բուսակները սկըսում են աճել միայն հաջորդ տարին:

Սրա բազմացման այլ ձևերի մասին գրականությունում ոչինչ չի հիշատակվում:

Մենք փորձել ենք այդ թփատեսակը բազմացնել ամռան կտրոններով: Ամռան կտրոնները վերցրել ենք երկու ժամկետում: առաջինը՝ հոկտեմբերի 22-ին, երկրորդը՝ դեկտեմբերի 11-ին:

Առաջին ժամկետում վերցված են աշնանը աճած միտմյա կանաչ շիվերից: Այս ժամկետի կտրոնների արմատակալման պրոցեսը սկսվել է երեք և կես ամսուց հետո, անշուշտ օդի ջերմության ցածր լինելու պատճառով (միջին ջերմությունը եղել է $9,1^{\circ}$): Արմատակալել են միայն $11,9^{\circ}/_0$ -ով: Առողջ մացած կտրոնները շարունակում են աճել:

Երկրորդ ժամկետում (11/12) կտրոնները վերցրել ենք ջերմության ավելի բարձր պայմաններում աճած կանաչ շիվերից: Կանաչ շիվեր ստանալու նպատակով մայր բույսը նախօրոք տեղափոխել ենք ջերմոց, որտեղ կարճ ժամանակամիջոցում թփի վրա առաջացել են բազմաթիվ կանաչ շիվեր, որից և վերցրել ենք կտրոնները:

Կտրոնները սկսել են արմատակալել հունվարի 14-ից և առաջին շրջանում արմատակալել են $25^{\circ}/_0$ -ով: Այդ ժամանակաշրջանում օդի միջին ջերմությունը եղել է $16,0^{\circ}$: Մասսայական արմատակալումը սկսվել է հունվարի երրորդ տասնօրյակից և կտրոնների արմատակալման ընդհանուր տոկոսը եղել է $57,2$: Տնկումից մինչև արմատակալման վերջը տևել է 51 օր, որի ընթացքում օդի միջին ջերմությունը կազմել է $16,4^{\circ}$. Այս գեպքում արմատակալման ցածր տոկոսը պետք է բացատրել օդի միջին ջերմության ցածրությամբ:

13. *Euopium europaeum* L. Գեղեցիկ դեկորատիվ թփատեսակ է, վարդագույն պտուղներով: Մեր ռեսպուբլիկայի կանաչ շինարարության մեջ քիչ է տարածված, որովհետև սերմերով աճեցնելը երկար է պեսում, քանի որ նրանք պահանջում են ստրատիֆիկացիա և ծլում են մեկ տարուց հետո:

Մենք այս թփատեսակը բազմացրել ենք կանաչ կտրոններով, ըստ որում կտրոնները վերցրել ենք տարրեր հասակ ունեցող թփերից, մի-դեղուած 2—3 տարեկան, մյուս դեղքում՝ 5-ից բարձր տարիք ունեցող թփից: Կտրոնները պատրաստվել են 5—6 ամ երկարությամբ, յուրաքանչյուրը 3—4 աշբով, կիսով չափ կտրած 2—3 տերեով: Կտրոնները տնկվել են մայիսի 26-ին արկղներում, մաքուր ավազում, դրսում թողնելով միայն մեկ աշբ: Երիտասարդ թփից վերցված կտրոնները արմատակալել էին 41 օրվա ընթացքում 80%-ով: Ավելի հասակավոր թփից վերցված կտրոնների արմատակալումը ավելի երկար է տեսում, մոտ 5—6 ամիս և արմատակալման տոկոսն էլ ցածր է: Արմատակալման շրջանում օդի միջին ջերմությունը եղել է 27°:

Եսում. europ.-ը ձմռան կտրոններով չի արմատակալում:

14. *Potentilla fruticosa* L. Այս թփատեսակը մեր ռեսպուբլիկայի կանաչ շինարարության համար նոր տեսակ է և արտադրությանը դեռ հանձնված չէ: Սա գեղեցիկ թուփ է դեղին ծաղիկներով, առտղանման տերեններով: Ծաղկում է հուլիս ամսվա առաջին կեսերին և ծաղկման շրջանը բավական երկար է տեսում: Մեր պայմաններում ցրտադիմացկուն է և աճում է տրագ: Մերմով բազմացվում է հեշտությամբ. դրա համար էլ մինչեւ այժմ նրա բազմացման այլ եղանակները ուսումնասուրված չեն:

Մենք փորձել ենք *Potentilla fruticosa*-ն բազմացնել կանաչ կտրոններով: Կտրոնները 3—4 ամ երկարությամբ տնկել ենք մարտի 2-ին, մասսայականորեն արմատակալել են ապրիլի 29-ին, տալով $75^{\circ}/_0$ արմատակալում: Արմատակալման ընթացքում օդի միջին ջերմությունը եղել է 19,7°:

Այս թփատեսակը շատ քիչ սերմ է տալիս, ուստի մենք գտնում ենք, որ կարճ ժամանակում շատ բույսեր ունենալու համար անհրաժեշտ է այն բազմացնել ամռան կտրոններով:

15. *Clematis orientalis* L. Փաթաթվող թուփ է, նուրբ հոտավետ դեկորատիվ ծաղիկներով: Մերմերը ծլում են 6 ամսից հետո: Մենք փորձել ենք այս թփատեսակը բազմացնել կանաչ կտրոններով:

Կտրոնները պատրաստել ենք ջերմոցում աճեցրած թփից 4—5 ամ երկարությամբ և տնկել արկղում, մաքուր ավազում, մարտի 1-ին: Մասսայական կերպով արմատակալել են 25 օրվա ընթացքում, տալովիլի 25-ին, տալով $100^{\circ}/_0$ արմատակալում: Արմատակալման ժամանակաշրջանում օդի միջին ջերմությունը եղել է 19,9°:

16. *Carpinus orientalis* Mill. Մերմերը պահանջում են 1—1,5 տարվա ստրատիֆիկացիա: Բույսը աճում է չափազանց դանդաղ:

Մենք այս տեսակը փորձել ենք բազմացնել կանաչ կտրոններով: Կըտրոնները պատրաստել ենք ջերմոցներում աճեցրած երկու տարեկան բույսից և տնկել փետրվարի 26-ին, արկղում, մաքուր ավազում: Արմատակալումը տեսել է մինչեւ մայիսի 5-ը, այսինքն՝ 68 օր և արմատակալել են $49^{\circ}/_0$ -ով: Օդի միջին ջերմությունը եղել է 18,8°: Անշուշտ ցածր ջերմությունն է պատճառը, որ արմատակալման տոկոսը այդքան ցածր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Вехов Н. К. и Ильин М. Г. Вегетативное размножение древесных растений летними черенками. Бюллетень Глав. сада, выпуск № 9, АН СССР, 1951.
2. Сельхоз. Энциклопедия, Декоративное садоводство, 1949.
3. Мичурин И. В. Сочин., т. III, 1948.
4. Альтов И. А., Сагида П. Н., Загущенный В. В. Справочная книга по зеленому строительству, Сельхозгиз, 1936.
5. Вехов Н. К. Отводковое размножение древесных и кустарниковых пород, изд. МКХ, 1948.

Е. А. ГРИГОРЯН

Опыты вегетативного размножения некоторых древесно-кустарниковых пород

Р е з у м е

Внедрение в практику озеленения некоторых высокодекоративных пород, выявленных в результате интродукционной деятельности Ереванского ботанического сада, затрудняется по причине недостаточности посадочного материала и отсутствия сведений о способах их размножения. Проведенные в 1951 году многочисленные опыты имели целью установить возможности вегетативного размножения путем летнего и зимнего черенкования, а также укоренения листовых черешков целого ряда древесно-кустарниковых пород. Зеленые (летние) черенки и черешки сложных листьев, высаживались в оранжерее, в ящики с песком, а зимние черешки укоренялись также и в условиях открытого грунта. Стимуляторы роста не применялись. В результате проведенных опытов установлена возможность успешного размножения всех испытуемых пород летними черенками, а для некоторых видов—также и листовыми черешками. Ниже приводится описание условий и результатов проведенных опытов вегетативного размножения для каждой породы в отдельности.

1. *Platanus acerifolia Ait willd.* Обычно размножается семенами и зимними (одревесневшими) черенками. Судя по нашим опытам летние черенки укореняются лучше. Летние черенки, длиной 4–5 см, несущие 4 почки, были посажены 2.VIII. Начало укоренения отмечено через 25 дней. В конечном итоге укоренился 51% летних черенков, при средней температуре воздуха 23,7°. Зимние черенки, длиной 18–20 см, взятые с двухлетних побегов и высаженные в открытый грунт 18.IV, укоренились через 49 дней на 40%.

Сравнительными наблюдениями над растениями, выращенными из семян и полученными из зимних черенков, установлено, что сеянцы, в отличие от укорененных черенков, уже на 2-й год жизни об-